

Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ ԱՋՐ.

• Ի վերայ Աջին եւ Ղըմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան ։

Աւար. Դաւր. Ժ. :

(Շարունակութիւն եւ վերջ.)

Դ. :

Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ այն նշխարների մէջ, որոնք գտնւում էին Հայաստանում իբրեւ Ս. մասունք, առաջին և նշանաւոր տեղը բռնում է նորա Ս. Աջը, Հայոց Հայրապետական աթոռից անբաժան էր այդ սրբութիւնն ամէն տեղ և ամէն ժամանակ. Հայրապետութեան նուիրական և վաւերական նշաններից մէկն այն էր իսկապէս, որ Ս. Գրիգորի առաքելական փոխանորդ Ճանաչուած Հովուապետը նորա Ս. արքային օրհնէր աղբիւն և բաշխէր նորա օրհնութեամբ օծութեան Ս. իւղը, Թէ երբ անջատուեցաւ Ս. մարմնից մեր նախահայրապետի բազուկը, իբրեւ առանձին սրբութիւն գրուեցաւ Վաղարշապատու Մայր Եկեղեցին և ապա փոխադրուեցաւ աթոռի հետ Դուին, յայտնի չէ, Սակայն պարզ է, որ Ե. դարում Ս. Աջն է եղել Հայոց նախարարներին դիմաւորելու ժամանակ հանդես բերուած այն մասունքը, որ յիշում է Փարպեցին, այդ երեւում է Ջենոն կայսեր մասին պահուած աւանդութիւնից, Մի յիշատակարանում ասուած է Թէ Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ նշխարաց գիւտն իմանալով, Ջենոն մարգիկ ուղարկեց Հայաստան և բռնութեամբ Բիւզանդիայ տանել տուեց բոլոր նշխարները բացի Ս. Աջից, « և ետ աւտում է, զաջ ձեռնն Հայոց վասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսաւ և այլինչ ևս մասն (Սուրբ. Հայկ. Զ.) » ։ Այս տեղից երևում է, որ Ջենոն Հայերի ձեռքը թողել է այն, ինչ որ ինքն իսկապէս չէր կարող տալ, որովհետև նոցա ձեռքումն էր. « մասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսաւ » վերաբերում է Ս. Աջին, որ արդէն յայտնի մասունք էր Ե. դարում և ամէն ժամանակ իբրեւ մի պատուական սրբութիւն գուրս էր բերւում ։ Խաչի նշանի հետ միասին ժողովուրդ օրհնելու համար, Հայրապետական աթոռի յաճախակի տեղափոխութիւնների ժամանակ Ս. Աջն էլ իւր տեղը փոխում էր, Բագրատունեաց Թագաւորութեան անկման և Սելջուքեան հրոսակների պատճառած շփոթութիւնների և գաղթականութիւնների ժամանակ Ս. Աջը գտնւում էր Աղթամար, ուր տարուել էր մի քանի այլ ո. նշանների հետ, ինչպէս երևում է, դեռ Ժ. դարի վերջերում, Այդ մասին հաւաստի տեղեկութիւններ պակասում են, Յայտնի է այն, որ Դրասխանակերտից Թովհանէս Զ. Կաթողիկոսն, առ հասարակ շատ նեղուած լինելով ներքին և արտա-

քին թշնամիներից, երբ 923 թուին Դուինի կաթողիկոսարանն ընկաւ ներս ոստիկանի ձեռքը, հետագա գնաց Վասպուրական, ուր մի տարի յետոյ վախճանուեցաւ, Այնուհետև նորա երեք յաջորդներն՝ Ստեփաննոս Բ., Թէոդորոս Ա. և Եղիշէ Ա. կաթողիկոսներն Հայրապետութեան աթոռատեղի ընտրեցին Աղթամար կղզին, ուր և աթոռը մնաց մօտ քսան տարի, Թէպէտ և յետոյ յիսուն տարու չափ աթոռը մնաց Շիրակայ Արգինա աւանում, բայց Ս. Աջի մասին յիշատակութիւն չկայ, Աջքի առաջ ունենալով, որ ԺԱ. դարում Բիւզանդական կայսրերը շարունակ հետամուտ էին Հայոց կաթողիկոսութիւնն Հայաստանի միջից վերցնելու, և երկիրն էլ արդէն մաս մաս եղած էր զանազան իշխանութիւնների ձեռքում, որ և պատճառ եղաւ, որ Պետրոս Ա. Գետադարձից յետոյ Թէ աթոռը Թափառական վիճակ ունեցաւ և Թէ հանդես եկան մի ևնոյն ժամանակ մի քանի կաթողիկոսներ, պէտք է կարծել Թէ Ս. Աջը նոյն Աղթամարի կղզու վերայ և մնացել էր, Այս երևում է նախ այն հանգամանքից, որ Բարսեղ Ա. Պահլաւունի կաթողիկոսն (1080—1113 թ.) հրամայեց Աղթամարից բերել իւր մօտ Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ Աջը, քօղը և զօտին, բայց միաբանները չտուին, և երկրորդ որ Թոռնիկ Մամիկոնեանի որդին Դաւիթ արքեպիսկոպոսն, հիմք բռնելով որ Աղթամարում են Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ աջն և այլ սրբութիւնները, միաբանեցուց իրեն հետ տեղական եկեղեցականներին և իշխաններին և 1113 թուին ձեռնադրուեցաւ կաթողիկոս, այդպէս ըսկիզբն գնելով Աղթամարի աթոռի, Այն ժամանակ արդէն Գրիգոր Գ. Պահլաւունին (1113—1163 թ.) ընտրուած և ձեռնադրուած էր Հայոց կաթողիկոս, ուստի Սև լերան վերայ եկեղեցական ժողով գումարուեցաւ, որը բանադրեց Դաւիթին և նորա աթոռն ապօրինի ճանաչեց, Դորանից յետոյ, յայտնի չէ Թէ ինչպէս, կրօնաւորները գողացան Աղթամարից Ս. ԼՈՍԱԼՈՐԶԻ Աջը և հասուցին Գրիգոր Գ. Պահլաւունու ձեռքը, Այդ իսկ ժամանակից և Ս. Աջը մնաց շարունակ Հայոց Հայրապետների մօտ, ներսէս Դ. Շնորհալին (1165—1173 թ.) իւր ընդհանրական թղթի մէջ յիշում է օրհնութիւն Ս. Աջից. « Աղջոյն սիրոյ և խաղաղութեան, ասում է, հասցէ յաստուածընկալ և փրկական սրբոյ նշանէս և ի հրեղէն լեզուաց Հոգւոյն ընդունողաց առաքելական նշխարս և ի սոսուրբ ԼՈՍԱԼՈՐԶԻ մերոյ աջէս և աթոռոյս, Գանի որ Ս. Աթոռն Հռոմկլայի գղեակումն էր (1148—1293 թ.) Ս. Աջըն էլ այնտեղ էր գտնւում, Վարդան պատմիչն, անշուշտ, ինքն այդ տեսել է Հռոմկլայ եղած ժամանակ, որ իւր ներքողի մէջ գրում է. « Եւ աջն

լուսնեկալ և շնորհարաշին հանգերձ այլ նշխարօր նորին (Ս. Լուսաւորչի) պատարագամատոյց սեղանովն և գաւազանն կայ լաթոռ սրբութեան իւրոյ յաստուածահաստանն գրեակ հռոմկայն կոչեցեալն։ Ս. Աւջից զատ օր Աղթամարից բերուեցաւ յիշուամ են և այլ սրբութիւններ, Ասապուրականի Զորոյ վանքում պահուամ էին* Ս. Գրիգորի հովուական գաւազանը, « մատանին պատկերեալ և գօտին աշխատասէր միջոյն » այս սրբութիւնները Զորոյ վանքից անցել էին Աղթամար, որտեղից և փոխադրուեցան հռոմկայ, եթէ սոցա վերայ աւելացնենք և Ստ. Օրպէլեանի յիշած « աթոռ » (Գլ. Կէ.) այն ժամանակ կր տեսնենք, որ ԺԲ. դարում հռոմկայի կաթողիկոսարանում պահուամ էին Ս. Լուսաւորչի Աջը, գաւազանը, մատանին, գօտին, պատարագամատոյց սեղանը, աթոռը, և « այլ նշխարներ » Միւս սրբերի մասունքներ և այլ տեսակ սրբութիւններն ևս պակաս չէին այնտեղ, որոնց մէջ, անշուշտ, նշանաւոր են առաքելական նշխարները, կենաց փայտը (Ս. Նշան), Ս. Հռիփսիմէի հողաթափը, շղարը և այլն, 1292 թուին հռոմկան ընկաւ Եգիպտացոց ձեռքը, որոնք գերի վարեցին Ստեփաննոս Գ. կաթողիկոսին և աւար առան ամբողջ հայրապետանոցը, « Վապուցին կողպուցին, ասում է ժամանակակից պատմիչն Ստ. Օրպէլեան, զամենայն սպաս եկեղեցւոյն և զանկ չ ա ել ի գանձն աստուածային և զամենայն ստացուածն »։ Գերի տարուեցան Եգիպտոս ւխտաւորագոյնն մերոյս գորհի աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի » և այլ սրբութիւնները։

Մեկը Աշրաֆ սուլթանը խեղճ կաթողիկոսին տարաւ իւր հետ երկաթի կապանքներով և շրջեցնում, ցոյց էր տալիս նորան երեւի իրրեւ նշանաւոր գերի։ Մի տարի բանտում մնալուց յետոյ վախճանուեցաւ Ստեփաննոս Գ. և թաղուեցաւ այնտեղ Հաբաշների եկեղեցւում Սիւնեաց բարձունքներից տխրագին գիտեց, տեսաւ Ստեփաննոս Օրբէլեան քրիստոնեայ Հայոց այս բեկումը, տեսաւ այն հռոմկայի անկումն, ուր մի քանի տարի յառաջ ինքը Ս. Լուսաւորչի աջով եպիսկոպոս էր օրհնուել և համբուրել էր այնտեղ գումարուած սրբութիւնները, իմացաւ, որ « ամեն աշն սըրբութիւնքն, որ գերեցան, կորեան անհետ և անգիւտ և բնաւ ոչ երեւեցան, թէ և բազում անգամ յոյզ և զէ ի թագաւորէն Հեթում » և ամբողջ ազգի վիշտը, կարծես, միանգամից նորա սրտի մէջ կեդրոնացաւ, անգոր լինելով անկառնալի կորուստն յետ

բերելու, նա ի վերջոյ լաւահառաջ աղաղակում է. « ուր են այժմ զգեստըն հայրապետական, ուր թագըն պատուական, ուր աջն և գաւազանն և աթոռն սրբոյն Գրիգորի »։

Ե.

Այս ծանր հարուածից յետոյ հայրապետական աթոռը փոխադրուեցաւ Սիւս, ուր մնաց նա մինչև 1441 թիւը։ Օրբէլեանի խօսքերից երեւում է, որ դեռ 1294 թուին Հեթում Բ. թագաւորն հետամուտ եղաւ Ս. Աջը գտնելու, անշուշտ, նորա հետամտութիւնը մի թագաւորի վայել միջոցներով էր լինում, սակայն մեզ հաւաստի յայտնի չէ, թէ ինչ ճանապարհով գտաւ նա և Եգիպտոսից վերադարձուց Ս. Լուսաւորչի Աջը, Մեր հին ձեռագրների յիշատակարաններում շատ ենք կարդում օրինակներ, որ բարեպաշտական և աստուածահաճոյ գործ էին համարում մեր նախնիք ինչպէս գերիներ աղատելը, նմանապէս և իրրեւ աւար անօրէնների ձեռքն ընկած աջերը, խաչերը, աւետարաններն և այլն, Հեթումի պէս կրօնասէր թագաւորի համար շատ բնական էր ուրեմն իրրեւ հոգեւոր գործ հետամուտ լինել և գնել, թափել գերութիւնից Հայոց սրբութիւններն և աղատուել մահմետականների և այլ ազգերի նախատիքից, Այդպիսով հաւանական է կարծել, որ Հեթումին յաջողուել է վերադարձնել, եթէ ոչ բոլոր, գէթ նշանաւոր սրբութիւնները, Առաքել Դաւրիթեցին մի տեղեկութիւն է հաղորդում, որ աւելի տեղիք է տալիս այսպէս կարծելու. նա ասում է, որ երբ Ս. Լուսաւորչի աջը տարան Եգիպտոսի սուլթանի ապարանքը, մահ ընկաւ այնտեղ, այնպէս որ անթիւ անհամար մարդիկ էին մեռնում, այդ մահը գաղար չառաւ, մինչև որ « գար ձեռքի զաջ ձեռն սուրբ Լուսաւորչին Գրիգորի յերկիրն Կիլիկիոյ առ բարեպաշտ թագաւորն Հեթում » այս տեղեկութիւնը Դաւրիթեցին կարգացել է « ի շարադրութիւնս հայրապետաց »։ Այսպէս ուրեմն Ս. Աջը գերութիւնից վերադարձել է Սիւս, ուր մնաց նա մինչև հայրապետական աթոռի փոխադրութիւնը Սիւից Աղարշապատ 1441 թուին։ Այն ժամանակ, երբ Սոյ աթոռն սկսեց հետոց հետեւ նստանալ և իւր աղեղնութիւնը կորցնել, նոյն իսկ Սիւսի կաթողիկոսարանում էլ շարունակ տեղի էին ունենում շփոթութիւններ, ԺԵ. դարում այդպիսի շփոթութիւնների ժամանակ յայտնուում էր, որ Ս. Աջը գողացուած է Սիւից, 1439 թուի երկու յիշատակարաններ որոշ յայտնում են այդ, Առաջին ասում է « գողացան զԼուսաւորչի Աջն ի Սիւս », երկրորդն ասում է « գրեցաւ Ս. Աւետարանս ի թուին Հայոց

* Թովմ. Արծր. Ա. 10.

ԳՁԸ. . . ի վանս որ կոչի Արգելան . . . ի հայ-
 րապետութեան Լուսաւորչին քան-
 զի յայտմամբ վերացեալ եղև Աջ թուականին
 և ոչ գիտեմք զի՞նչ եղև* . . . Այդ թուականին
 Ստի ամբողջ վերայ, երևի, կամեղիկոս չկար, Գրի-
 գոր Մուսարէկեանց գեռ չէր նստել, իսկ նախորդ-
 ներն արդէն անկարգ էին: Ս. Լուսաւորչի Աջի
 գողանալն յիշում է և յետագայ տարիների յիշա-
 տակարաններում: Նոցա մէջ հետաքրքիրն է 1441-ին
 գրուած հետեւեալ նկատողութիւնը՝ «ի թուին Հայոց
 մեծացն ԳՂ. յամենանն մարտի . . . ի հայրապե-
 տութեան Տ. Գրիգորի կամեղիկոսի ամենայն Հա-
 յոց (Մուսարէկեանցն է) . . . Աջ Ս. Լուսաւորչին
 մեղոյ Գրիգորի . . . անյայտ եղև, ոչ գիտեմք թէ
 գողացան և ոչ գիտեմք՝ ինքն զինքն ծածկեց, և ի
 մեծ նեղութիւն կան և ի արտմութիւն Հայոց ազգս
 վանայս պատճառի և զկամեղիկոս Գրիգոր քաղում
 չարչարեցին, և այլ եպիսկոպոսը ընդ նմա վասն Ա-
 ջին Լուսաւորչին, և ոչ գտին գնա. որ յուսմք
 ամենասուրբ Հոգին Աստուած, զի յայտնեցէ զԱջ
 Ս. Լուսաւորչին մեղոյ . . . »: Նոյն տարին մի այլ
 յիշատակարանի մէջ գրուած է ի հայրապետութեան
 մեծի Աթոռոյն, որ էր ի Սիս խափանեցաւ, զի զաջն
 Ս. Լուսաւորչին անտի գողացան, և յամս եր-
 կու աղգս Հայոց անտէր ունչ մնաց ի
 դառն և ի չար ժամանակիս . . . »: Այս տեղեկու-
 թիւններից երևում է, որ Ստի ամբողջ անկման պատ-
 ճառներից մէկն այն է, որ Ս. Աջն այլ ևս այնտեղ
 չէր, սակայն ազգի վիշտը, որ զգում էին ամենքը,
 շուտով փարատուեցաւ, որովհետև նոյն յիշատակա-
 րաններն հակիրճ յայտնում են թէ «զԼուսաւորչի
 աջն ի Սոյո գողացան և բերին յԷջմիածին զԽոր-
 վիրապայ հայր տէր Կիրակոս կամեղիկոս օրհնե-
 ցին»:** Ս. Աջի Վաղարշապատում յայտնուելու
 պատմութիւնը շատ պարզ չէ, տարօրինակ դարձու-
 ած է «գողացան» չվերացեալ եղև» «անյայտ եղև»
 «գողացեալ տարան» մինչև անգամ մի յիշատակա-
 րանում*** ասուած է, թէ «չորս ամէր, որ զսուրբ
 Լուսաւորչի աջն կորեալ էր ի Սոյո, ինչպէս գողա-
 ցան, ո՞վ էր յանցաւորն, ո՞վ գտաւ, ինչպէս յայտ-
 նուեցաւ, ոչ ինչ չեն գրում, Թովմայ Մեծոփեցին,
 որ հայրապետական ամբողջ փոխադրութեանը մաս-
 նակեղ է և ինքն է նկարագրել այդ դէպքը, իւր
 յիշատակարանում ոչինչ չի յիշում թէ Ս. Աջի
 անյայտանալու և թէ Ս. Էջմիածնումն յայտնուե-
 լու մասին: Նա, որ այնքան պատճառներ է մէջ բե-
 րում, որպէս զի Ստի ամբողջակների անարժանու-

թիւնն ապացուցանէ և Ս. Էջմիածին փոխադրելու
 կարևորութիւնն և իրաւունքներն հաստատէ, թէ և
 այդ անում է մեծ մասամբ տեսիլներ պատմելով:
 Ս. Աջի համար միայն մի բան է յիշում: Կիլիկեցիք
 «թողին, ասում է, զկանոն և ալն ի Լու-
 սաւորչէն և յաջ Լուսաւորչին երգ-
 նուին, որ ոչ զԼուսաւորչին ճանաչե-
 ին և ոչ զաջն որ ա գիտէին»: * Այս խօսքերից
 կարող ենք մակարելի, թէ նորալուծեան պատճառն
 այն պիտի լինի, որ Թովման, երևի, առաւել նշանա-
 կութիւն էր տալիս ոչ թէ Ս. Աջին, Ս. Լուսա-
 ւորչի դրած կանոնների պահպանութեանն և իրա-
 գործմանը: Մինչդեռ Հայոց մէջ եղել է մի ժամա-
 նակ, և այն ժն. դարում և յետոյ, երբ վարդա-
 պետներն ուղեցել են հասկանալ, թէ Ս. Էջմիած-
 նում գտնուող աջը Ս. Լուսաւորչի ո՞ր ձևըն է՝
 աջ թէ ձախ, կամ թէ ո՞րն է իսկականը՝ Ստի աջը
 թէ Էջմիածնի: Այս հարցերից երևում է, որ Սիս
 ևս մի աջ կայ եղել, Բայց Առ. Դաւրիթեցին,
 հանգամանօրէն յառաջ բերելով զանազան յիշա-
 տակարաններ բացատրում է, որ Ս. Լուսաւորչի աջ
 բազուկը գտնուում էր Սսում, 1439 թուին այնտե-
 ղից գողացել են, յետոյ 1441 թուին զարմանալի
 կերպով նոյն աջն յայտնուել է Ս. Էջմիածնում և
 մնացել է այնտեղ ընդ միշտ: ** Գրիգոր Ժ. Մա-
 կուեցին, որ Կիրակոս վիրապետու փոխանակ կա-
 թուղիկոս ձեռնադրուեցաւ 1443 թուին, իւր մի
 կնիգակի մէջ որ 1445 թուին տուել է Մշու վիճակի
 ժողովրդին, բաղմաթիւ մասունքների և Ս. Նշան-
 ների շարքում յիշում է Ս. Լուսաւորչի աջը, որով
 եպիսկոպոս է օրհնել Ս. Կարապետի վանքի առաջ-
 նորդին, 1460 թուին Աթմանայ Զաքարիա կա-
 թուղիկոսը, բռնաւոր Ջահանշահի սիրելին, նորա-
 նից իրաւունք ստացաւ Ս. Էջմիածնի կամեղիկո-
 սութիւնն ստանձնելու: յիշատակարաններն ասում
 են, որ Զաքարիա պատուական ընծաներով գնաց
 Թաւրեղ և գրաւեց Ջահանշահի և նորա տիկնոջ
 սիրտը, որոնք շատ սիրով ընդունեցին նորան և
 պարգև տուին զԱջ Լուսաւորչին . . . և զպատիւ պատ-
 րիարքութեան: » Ինչպէս ընկաւ Ս. Աջը Թաւրեղ
 Ջահանշահի մօտ, որ նա կարողացաւ պարգևել
 Զաքարիային, յայտնի չէ, չենք կարող մտածել,
 թէ այդ պարգևելը նշանակում է Ս. Աջի իրաւուն-
 քը տալ, որովհետև մի այլ յիշատակարանում նը-
 շանակուած է, թէ Զաքարիան եկաւ Ս. Էջմիածին,
 իրեն հետ բերելով Ս. Աջը, նա երկար ժամանակ
 չմնաց Մայր Աթոռում, այլ թշնամիների նենգու-

* Առաջ. Դաւր. Լ. Նոտարը Հայոց, 418.

** Նոտ. 4. 125, 125, 126. *** Նոտ. 4. 155.

* Թովմ. Մեծոփ. Յիշատ. 58.

** Առ. Դաւր. Լ.

Թիւնից զերծ մնալու համար 1461 Թուին Ս. Աջն առաւ և գնաց Աղթամար, Այն ժամանակները մեր երկրի մէջ քրիստոնեաներն այնքան ծնուած էին և այնպիսի հալածանքի և երկիւրի մէջ էին շարունակ, որ նոցա աչքին ամէն տեղ, կարծես, աստուածային այցելութիւն և մի առանձին բախտ էր երևում Ջաքարիայի արձակ համարձակ շրջելը եկեղեցական հանգէսներով, Երբ Աանայ ժողովուրդը լսեց թէ կաթուղիկոսն իւր հետ բերել է Ս. Աջը, բազմութեամբ զիմեցին ուխտ անելու և համբուրելու:

Բայաղիկից սկսած մինչև Աան և մինչև Աղթամար Ս. Աջը տանելու ժամանակ կաթուղիկոսը թափօր էր կազմում, որի առջևից գնում էր «խաչալամը» (խաչադրօ), սա մի խաչմատ էր մէկ երեսը տէրունական, միւս երեսը Ս. Լուսաւորչի, Տրուգատ արքայի և Հովհաննէ կոյսի պատկերներով: Խաչալամը «բարձրեալ կայր ի ծայրս ձողոյ և խաչ ոսկի կառուցեալ ի զուխս նորայ» Աանայ բէկը ցանկացաւ տեսնել այդ թափօրն և Ս. Աջը, Երբ որ Աանայ վերին դռնով թափօրը բերդ մտաւ, «ընդ առաջ ել գողողն Մահմուտ բէկ ամենայն մեծամեծօք իւրովք, տամբ և ամենայն ընտանեօքն, և երկրպագութիւն մատուցանէին Սրբոյ Աջոյն և համբուրէին և զաղերս պատարագաց նուիրէին, և մեծարեալ խիւսիեաց զհայրապետն և զարձոյց յօթեմանս իւր, Գաւառի ժողովուրդն, այս տեսնելով, ամէն օր գալիս էին Ս. Աջին երկրպագութիւն մատուցանում և հայրապետին ողջունում ընծաներով և պատարագներով, Երբ որ Աանից մեկնեցաւ կաթուղիկոսն և գնաց Ոստան, նորա յետեւից և առջևից գնում էին մինչև հազար մարդ, և նոցա բոլորի առջևից համարձակ տարւում էր Հայոց խաչալամը, «ունելով զզուլին զխաչ ոսկեփայլեալ լուսոյ նման», Ոստանի այլազգի բնակիչներն, Հայոց այդ ուրախութիւնը տեսնելով, «ի խոր խոցեցան ընդ պայծառութիւն և համարձակութիւն հայրապետին, որ ի գաւառէն Տարբերունէոյ մինչ ի քաղաքն Ոստան խաչալամով էր եկեալ» եպիսկոպոսօք և վարդապետօք և բազում կարգաւորօք և ժողովրդովք, ժողովուրդացան նոքա քուրդ պարոնի մօտ և դաւաղըրութիւն կազմեցին Ջաքարիայի դէմ: Արթուն հայրապետն, այդ իմանալով, ժամանակին հեռացաւ այնտեղից և առաւ Ս. Աջը գնաց Աղթամար, Այս եղաւ 1462 Թուի տարեմտին, Դաւաթարդի 16-ին Ս. Յակոբայ պատի ուրբաթ օրը, այդ օրից Աղթամարու Ս. Խաչ վանքը դառաւ ժողովրդի համար մի նորանշան ուխտատեղի, բազմութեամբ դալիս էին ընծաներով, մատաղներով համբուրում էին Ս. Աջը և առնում էին հայրապետի օրհնութիւնը, * Ժողո-

վուրդն էլ շատ գոհ էր և օրհնում էր Ջաքարիա կաթուղիկոսին, «ուրախացեալ բերկրեցան յաստուածատուր պարգևացն և շնորհացն, որ տուաւ ի սուրբ Աջէն Լուսաւորչի, և ամենայն օր օրհնէր զԱրարիչն Աստուած և զտէր Ջաքարիայ կաթուղիկոսն, որ արժանացոյց տեսլեան Ս. Աջոյ Լուսաւորչին» * Այդ ուրախութիւնը միանգամայն հոգեոր էր և բարոյական, ժողովուրդն ինքը տառապանաց և նեղութեան մէջ էր ամէն տեղ, 1461 Թուի յիշատակարաններից մէկի մէջ գրիչը շատ ծանր է համարում ժամանակի դառնութիւնը, «վասն անբարի և տառն ժամանակիս, յորում եմք, չէ բնաւ կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել, յորում ժամանակի նեղն ազգն քրիստոնէից երեք ալեան թշուառութեամբ», ** Այսպիսի գանգատներով լի են ժամանակի յիշատակարանները, որոնցից իմանում ենք, որ սովը, կոտորածը, բռնի կրօնափոխութիւնը, սրբութիւնների պղծումը, վանքերի և եկեղեցիների կողոպտումն և աւերումը, մորելը, մահաւորածամը, հալածանքն և այլն միմեանց հետ դաշնակից էին եղել մարդկային չարութեան ամէն նրբութիւններն, յերևան հանելու և մի խեղճ հարստահարուած ազգ ոչնչացնելու, Եւ այդ է պատճառը, որ Ջաքարիա կաթուղիկոսի յաջողութիւնը շատ և այնքան շատ ուրախացում և մխիթարում էր ժողովրդին, Այս հանգամանքի մէջ ոչ պակաս աչքի է ընկնում նոյն իսկ Ջաքարիայի անձնաւորութիւնը, յիշատակարանները նորան ներկայացնում են իրրեւ ժիւր, գործունեայ, քաղաքագէտ, ժողովրդի և եկեղեցու շահերին հաւատարիմ և անձնուէր մարդ, որն ինչպէս ասում են Թերեւս չափազանցութեամբ, նաև տոհմական ազնուութիւն ունի, լինելով Արծրունեաց Գագիկ թագաւորի տանից, Ջահանշահի և Բաղիշու ամիրայի մէջ ծագած գգնութեան և կռիւների ժամանակ Ջաքարիա կաթուղիկոսի սիրտը չփմացաւ տեսնելով Բաղիշու անմեղ ժողովրդի կրած հարուածները և «զտապալումն սրբոց սեղանացն, զգերեվարելն սրբութեանց և զխափանումն փառաբանութեանցն Աստուծոյ և զտարաշխարհիկ լինելն ամենայն խառնիճաղանձ ժողովրդեան՝ զգերելն և զտատանելն» ասում է Առաքել Դաւրիթեցին, մտաբերելով իւր հովուական պարտաւորութիւնը «եզ, ասում է, զանձըն իւր ի վերայ բանաւոր հօտին «Քրիստոսի» ի վերայ ամենայն ժողովրդեան Բաղիշու և արարեալ զսիրտ իւր ի բրզկարծր վէճ և մտեալ առաջի թագաւորին (Ջահանշահի) ետ զանձն իւր

* Առ. Դաւթ. 2.

* Նոտ. 2. 208.

** Նոյն 206.

փրկանս փոխանակ բազմաց՝ տ ու ե ա լ զ ձ ե ո ա-
գ ի թ՝ առնուլ զհարկս յամիրայէն Բաղիշու և տալ
կայսերն (Ջահանշահին) առ ի մնալ երկրին ի խա-
ղաղութեանն։ Բունաւորն ընդունեց կաթուղիկոսի
երաշխաւորութիւնն և տուեց նորան շնանագիր և
հրաման՝ առնել զինչ և կամեսցի։ Արիաքան հայ-
րապետը «վաղվաղակի ձիրնթաց արշաւմամբ» Թաւ-
րեղին Բաղէշ գնաց և փառաւոր ընդունելութիւն
գտաւ այնտեղի ամիրայից, խաղաղութեան պայման-
ներն որոշեց, հասաւ Խլաթ և Ջահանշահի զօրա-
գլուխներին երկրորդ «ձեռագիր» տուեց, և հաս-
տատեց խաղաղութիւնն երկու իշխանութիւնների
մէջ։ Ինքն երեք ամիս նստաւ Բաղէշում և խոստու-
ցած հարկերն ստացաւ, տարաւ յանձնեց Ջահան-
շահին։ Եւ ա ղ ա տ ե ա ջ ւ ա ս ու մ է պ ա տ-
մ ի չըլ զ ա մ ե ն ա յ ն ի ա ու ն ի ծ ա ղ ա ն ծ ժ ո-
ղ ո վ ու ռ դ զ չ ա յ և զ Տ ա ճ ի կ ի ձ ե ո ա ջ
թ շ ն ա մ ե ա ջ և ի դ ա ո ն գ ե ռ ու թ ե ն է։
Այս ամէնն այսպէս լինելուց յետոյ՝ շատ ընական
է, որ ժողովուրդն օրհնում էր հայրապետին, շատ
ընական է, որ Վանայ «գոռոզ» Մահմուտ բէկն
այնպէս սիրով և պատուով ընդունեց քրիստոնէա-
կան ցնծայից թափօրը բերդի մէջ, նմանապէս և
շատ ընական է այն ընդհանուր ուրախութիւնը, որ
յայտնում էր ժողովուրդը Ս. Լուսաւորչի Աջի պատ-
ճառով տեղի ունեցած եկեղեցական հանդէսների և
ազատ աստուածապաշտութեան համար այնպիսի ժա-
մանակներում, երբ ամբողջ Հայոց երկրում մի քը-
րիստոնէայ իշխան և տէր չկար, որ հովանաւորէր
քրիստոնէաներին, իսկ մահմէտական իշխանները մեծ
մասով ծարաւի էին ս. եկեղեցու պաշտօնեաների
և ժողովրդի արեանը։

Այս բազմարդիւն և օրինակելի գործունէու-
թիւնն արդեօք ի՞նչ Ս. Լուսաւորչի Աջն Աղթամար
տանելն եղաւ պատճառ, որ ժողովրդի սիրտը տա-
քացնող հայրապետի դէմ շարժուեցաւ մի տամարդի
մեքենայութիւն, լծէ ինչպէս. չգիտենք, 1464 թուի
յիշատակարանն, * արձանագրել ուզելով նորա մա-
հըն, ասում է. «տէր Զաքարիա կաթուղիկոս է ա ո
ղ է ջ մ ի ա ծ ի ն ն, և երկու տարի ի տեղն նստաւ,
և դ ե ղ ա կ ու ռ ե ղ և ի ն ո յ ց ա ն է, իսկ մի
այլ յիշատակարան հակիրճ նշանակում է. «Զաքա-
րիա կաթուղիկոսն դ ե ղ ե յ ի ն, մեռաւ»։ Արդէն
Դաւրիժեցին յիշում է, որ Զաքարիա Ս. Աջն Աղ-
թամար թողնելով, վերադարձաւ Ս. Էջմիածին և
երկու ամիս էլ կառավարում էր, նորա եղբրական
մահն, ինչպէս երևում է վերը բերած նկատողու-
թիւնից, Ս. Էջմիածնում պատահեցաւ և նորան դե-

ղեցին անշուշտ իւր մերձաւորները Ս. Աջն Աղթամա-
րում երկար չմնաց, Սարգիս կաթուղիկոսն և նորա
աթոռակալն Յովհաննէս (1466—1476 թ.) ուղար-
կեցին Աղթամար Օծոպեցի Վրթանէս եպիսկոպո-
սին, որը, Դաւրիժեցու ասելով, խորագէտ, գոր-
ծունեայ և լեզուանի մարդ էր, և միտքը դրել էր
Ս. Աջը փախցնել Աղթամարից, Պատմում են, որ
նա ծպտեալ մտաւ Աղթամար իրբն մի կաղ աշխար-
հական, «անգէտ գրոց և կարգալոյ», եօթն տարի
այդպէս ծպտեալ ծառայեց վանքին իրբն լուսարար,
և երբ եկան այնտեղ վաճառական մարդիկ մանրունք
ծախելու, նա գողացաւ Ս. Աջը և խաչալամը, և
պահ տուեց մի Զուղայեցի վաճառականի, և ճա-
նապարհ դրեց դէպի Զուղայ, Մի քանի օր յետոյ՝
ինքը Վրթանէս կղզուց հեռացաւ և անյայտացաւ,
ոտքի արուեստական կաղութիւնը չկար պլլ ևս, նա
երազեց, հասաւ Զուղայ և Ս. Աջն առնելով ճա-
նապարհ ընկաւ դէպի Ս. Էջմիածին, Արդէն Զու-
ղայից մարդ էր ուղարկել Վրթանէս և յայտնել էր
Սարգիս կաթուղիկոսին Ս. Աջի վերադարձը, լծէ
կաթուղիկոսն և լծէ շատ եկեղեցականներ և աշ-
խարհականներ ելան դիմաւորելու Ս. Աջին, նախի-
ջեանում հանդիպելով, եկեղեցական չբեղ հանդէս
կատարեցին և պատուեալ փառաւորեցին զսուրբ
Աջն լուցմամբ պայծառ մոմեղինաց և բուրմամբ ա-
նուշահոտ խնկոց և զնմամբ խոյոց և զուարակաց,
նախիջեանից «աշխարհախումբ բազմութեամբ» ա-
ռան բերին Ս. Աջն և «հանգուցին ի սեպհական և
ի ընական աթոռն իւր» Ս. Էջմիածին, Թէ կաթու-
ղիկոսն և լծէ բոլոր եկեղեցական և աշխարհական
բազմութիւնն իրենց անհուն ուրախութիւնն յայտ-
նում էին նորանով, որ «բազում և անթուելի պար-
գևս բաշխեցին Վրթանէս եպիսկոպոսին, այլ և որ-
քան նուէրք և քաջամարտի, զոր նուիրեցին ժողո-
վուրդքն սրբոյ Աջոյն, զայն ևս զբովանդակն շնոր-
հեցին Վրթանէս եպիսկոպոսին»։ Բացի այս պարգե-
ներից Վրթանէս եպիսկոպոսին շնորհուեցաւ արտօ-
նութիւն, քանի կենդանի է, աթոռակալ մնալու
(տեղապահ), մինչև ծերութեան տարիները մնաց նա
արդարեւ Ս. Էջմիածնում, բայց վերջը տկարութեան
պատճառով հեռացաւ դէպի իւր հայրենի գիւղն
Օծոպ նախիջեանի կողմերում, և այնտեղ իւր ազ-
գականների մօտ վախճանուելով, թաղուեցաւ Օծոպու
Ս. Աստուածածնի վանքում 1493 թուին, Ս. Էջմի-
ածնի միաբանութիւնն երախտագէտ հոգւով շարու-
նակեց պատուել նորա յիշատակը, կաթուղիկոսներն
իրենց միաբաններով տարին մի անգամ գնում էին
Օծոպու վանքը, պատարագ էին անում, վանական-
ներին պաշտման դրամ էին բաժանում, և աղբառ-

ներին կերակրում էին Արթանէսի յիշատակի համար *

9.

Արարատեան երկրի մեծ գերութիւնից յետոյ՝ որ տեղի ունեցաւ ԺԷ. դարի սկիզբում՝ Ս. Աջը մի անգամ էլ տեղահան եղաւ։ Այս անգամ Մեծն Շահարասի հրամանով և իրար գէմ գծառած Գաւիթ և Մելքիսեթ կաթողիկոսների տուած առիթներին շնորհիւ Ս. Աջը տարուեցաւ Ասպահան՝ Ս. Էջմիածնից մինչև Նոր Զուղայ հասցնելու համար երևանաւ խանը նշանակեց զօրականներ իսկ Ս. Աջին սպասաւորելու համար կարգուեցաւ և յատուկ քահանայ Յովհաննէս անունով, երբ որ Ասպահան քաղաքին մօտեցան, շահի հրամանով բոլոր Հայոց ազգը՝ որ այնտեղ բնակում էին՝ խաչով, խաչվառով աւետարանով խնկով ու մոմով և հոգեւոր երգերով ելան Ս. Աջին գիմաւորելու և շատ պատուով բերին դրին ի տուն Խօջայ Սաֆարին ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հոփիսիմեայ և ընդ այլոց սրբութեանցն՝ որք անդէն կային» Գիւնդն ժամանակ շահը հրամայեց տանել Նոր Զուղայ և Ս. Էջմիածնի քարերը, 1614 թուին նոյն զգուշութեամբ և նոյն կարգով նոյն տէր Յովհաննէսի հրահրութեան տակ կաշու մէջ կարեցին և սայլերի վերայ բարձած Ասպահան հասուցին Ս. Էջմիածնի տաճարից հանած տան և հինգ քար, որոնք նոյն պատուով ընդունուեցան և իրրեւ սրբութիւններ զբուրուեցան Նոր Զուղայի Խօջենց անունով եկեղեցու մէջ։

Քարերն և Ս. Աջը տանելու խորհուրդն այն էր, որ Նոր Զուղայում Նոր Էջմիածին շինուի, և այդ իսկպէս այն պատճառով, որ Նոր Զուղայի Հայերն աւելի իրենց հայրենական վանքերի, ուխտատեղիների, մանաւանդ Ս. Էջմիածնի, կարօտն էին քաշում, նորա մտարերում էին շարունակ, որ Էջմիածնումն է Ս. Լուսաւորչի Աջը, որով օրհնւում է Ս. Միւռնն և տարածւում ամբողջ ազգի մէջ, Շահաբաս զաղթականների խօսքերից հակացաւ, որ Ս. Աջի և Ս. Միւռնի պատճառով բոլոր Հայոց ազգն հնազանդում է Ս. Էջմիածնի Աթոռին և նորա կաթողիկոսին, ուստի նա կամենում էր Ս. Էջմիածինը փոխադրել Նոր Զուղայ, որպէսզի այնտեղ կաթողիկոս նստի, միւռնն օրհնէ և Հայոց ազգը հաստատուի մնայ այնտեղ, չորովհետեւ Աջի և Էջմիածնի վերայ է կապուած բոլոր Հայոց ազգը» ** Այս հեռատես խորհրդին յարմարուե-

ցաւ կարծես և քարերի ընտրութիւնը, Տեղերից հանեցին և Նոր Զուղայ տարան ընդ ամէնը տան և հինգ քար, որոնցից երկուսն այն քարերն էին, որ կազմում էին վէմ քարը, երեք բեմի քար, երկու բեմի հիւսիսային և հարաւային աստիճանների մի հատ Իջման տեղի քար, մի հատ աւաղանի քար, չորս հատ դրսի անկիւնաքարեր (վէմ անկեան) և երկու քարէ աշտանակներ Իւզարերից աւետարանի կերտների համար։

Քսան և հինգ տարու չափ Նոր Զուղայում մնալուց յետոյ՝ 1638 թուին սեպտեմբերի քսանին Ս. Աջը վերադարձաւ Ս. Էջմիածին, ուր և մնում է մինչև օրս, Այս անգամ Փիլիպպոս Հաղարեցի կաթողիկոսի (1633—1655 թ.) հնարագիտութեան և քանքերին ներ պարտական, Ազգի հայրը, որ իւր եռանդուն գործունէութեամբ դեռ Մովսէս Գ. Սիւնեցու ժամանակից յայտնի ծառայութիւններ արաւ Ս. Էջմիածնին և չթողեց, որ Տաճկաստանի Հայոց մէջ առանձին կաթողիկոսութիւն հաստատուի Տարոնոյ Ս. Կարապետի վանքում, ոչ թէ խնայում էր Նոր Զուղայի Հայոց նուիրական մասունքներ, այլ կամենում էր վերականգնել Ս. Էջմիածնի կեդրոնական նշանակութիւնն Հայոց եկեղեցու համար, երկիւղ կրելով, որ չլինի թէ Ս. Աջի պատճառով Նոր Զուղայի վանքը կաթողիկոսարան դառնայ, իսկ Մայր Աթոռը զրկուի իւր աւանդական պատուից, Սակայն այսպէս չէին մտածում Նոր Զուղայեցիք, որոնք ընդդիմութիւն ցոյց տուին կաթողիկոսին և աշխատում էին խափանել Ս. Աջի վերադարձը, նորա ասում էին, թէ այս օտար երկրում այլասեռ աղգերի մէջ «ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաստատութեան հաւատոյս» ոչ վանք, ոչ ուխտատեղի, ոչ սրբոց գերեզմաններ, ոչ սուրբ նշաններ, և ոչ էլ մեր հայրերի և պապերի դամբարաններ, «այլ միայն այս սուրբ Աջ է, զորոյ զճարադործութիւնս տեսանելով, ասում են, նորա ժաման զաւակաց մերոց, մնան ի հաւատս քրիստոսական», Նոր Զուղայեցիք այն էլ էին ասում, որ Ս. Աջը բերուած է շահի հրամանով, նորա ջրամանով էլ պիտի տարուի, Այդպիսի առարկութիւններից չթուլացաւ կաթողիկոսն, այլ Պարսից մեծամեծներին դիմելով և ընծաներ ու խոստումներ անելով, զբաւեց նոցա սիրտը, յետոյ աղերսագիր տուեց շահին և նորանից ստացաւ արտօնութիւն Ս. Աջը վերադարձնելու Ս. Էջմիածին, Զուղայեցիք դարձաւ ընդդիմացան, թէ և Խօջայ Սաֆարի թոռները, որոնց տանն էր պահուում Ս. Աջը, դիմադրեցին, բայց հայրապետը բարկացաւ նոցա վերայ, նորա Ս. հօր անէծքից վախենալով, հնազանդեցան, Կաթողիկոսն եկեղեցական թափօրով նոցա

* Առ. Դաւր. Է.

** Առ. Դաւ. ԺԷ.

տանից Ս. Աջը հանեց և դրեց Խօջենց եկեղեցին. մի կիրակի օր ինքը պատարագ արաւ, Ս. Աջը բացեց և ժողովրդի բազմութիւնն եկաւ համբուրելու. միւսնայն ժամանակ ընդգիմութիւնը շարունակում էին և չէին ուզում թողնել, Հայրապետն ստիպուեցաւ ծածուկ հանել եկեղեցուց Ս. Աջն և տանել Զուղայի վանքը, Այնտեղից տարաւ «Երեւանցուց» մէջ, ապա բերելով մի քարվանսարայ, ուր Յընայ գիւղացի Մարգար անուկով մի վաճառականի յանձնեց, և ուղարկեց մինչև Թաւրէզ, Եւ այս ամէնը նա այնպիսի ծածկութեամբ կատարեց, որ Զուղայեցիք չիմացան. Այս անելուց յետոյ՝ կաթողիկոսն ինքն էլ ճանապարհ ընկաւ դէպի Թաւրէզ և յիշեալ վաճառականից Ս. Աջն ստանալով բերեց հասուց Ս. Էջմիածին իւր սեփական աթոռը. * Ստեփաննոս վարդապետ Իլովացին, որ Լեհաստանի Իլով կամ Լէմբերգ քաղաքի մեծատուն հայերից մէկի տան զաւակ էր, և Նիկողի յարուցած խռովութիւնների ժամանակ յատկապէս ուղարկուել էր Ս. Էջմիածին Հայոց եկեղեցու ոգւով կրթուելու համար, 1657 թուին Ս. Լուսաւորչի աջի համար մի նոր պահարան շինել տուեց իրեն յիշատակ, Այդ պահարանը շինուած է արծաթից, վրէն կան քանդակներ, այն է Ս. Լուսաւորչի պատկերն հայրապետական զգեստով, Ս. Լուսաւորչի տասներկու շարքաւորներն և ծաղիկներ ու զարդեր, ունի և այսպիսի յիշատակարան. «յաւուրս մեծի հայրապետի Զուղայեցի տեառն Յակոբի թիւն Հայոց ըստ տումարի ՌՃԶ. ամի ի յիշատակ Ստեփաննոս Իլովացի վարդապետի նոր պահարան Աջոյ ձեռին սուրբ Գրիգորին Լուսաւորչի կազմեալ եղև Էջմիածնի առ ի պարծանս Հայկազ զարմի» Պահարանի ձևն է մի բազուկ արմնից մինչև մատների ծայրը. այնտեղ որտեղ որ թաթը միանում է բազուկին, Ս. Լուսաւորչի Աջը զարդարուած է կրկին ապարանջաններով, որոնցից մէկը ոսկի է թանգապին ակներով զարդարուած. վերջինս շինուած է 1770 թուին իբրև յիշատակ Թիֆլիսեցի Մարիամ տիկնոջ, ** Այդ պահարանի մէջ ամփոփուած Ս. Աջը պահուում է այժմ Ս. Էջմիածնի տաճարին կից՝ Գեորգ Գ. կաթողիկոսի 1869 թուին շինած՝ մասանց խորանում, որն ապահովութեան համար փակուում է երեք բանալիներով, Այնտեղ Ս. Աջի հետ միասին պահուում են Հայոց եկեղեցու հին նուիրական սրբութիւնները՝ Ս. Գեղարդը, Կենաց փայտը, Փրկչի Մարդեղութեան Ս. պատկերը, առաքելական և հայրապետական Ս. նշխարները, Ս. Հովսիփմէի գագաթը, և

այլ բազմաթիւ Ս. նշաններ, աջեր, խաչեր, աւետարաններ, եկեղեցական թանգապին սպասք և անօթներ, զգեստներ և պատկերներ, Ուխտաւորների համար երբեմն հանուում են Ս. Աջն և այլ սրբութիւններն և դրուում են Ս. Լուսաւորչի անուանը նուիրուած բեմի վերայ, ուր և կատարում են ջերմեռանդ հաւատացեալներն իրենց ուխտը.

Ի.

Ս. Լուսաւորչի և Ս. Աջի մասին այսքանն համառօտելուց յետոյ՝ շնորք կարող չտեսնել, որ դեռ Ե. դարից սկսած մինչև մեր ժամանակները մեծարանքի և երախտագիտութեան ջերմ արտայայտութիւններն Հայոց մէջ անպակաս են եղել՝ երեցնելու համար իրենց սէրն և հաւատարմութիւնն առ մեր Լուսաւորչին, Գոտ 1600 տարի շարունակ այդ զգացմունքը վառ է եղել Հայոց սրտերում, և այս իսկապէս այն պատճառով, որ Հայոց հոգեւոր պատմական կեանքի մէջ չկայ այնքան նշանաւոր և այնքան հանրամատչելի սրբութիւն՝ շօշափելի կերպով բոլորի սրտերն իրար հետ միացնող՝ ինչպէս Ս. Լուսաւորչի անունը, Նորա մէջ մարմնացած է անցեալի քաղցր յիշատակներից ամէն բան, Այդ անունը շատ որոշ կերպով զարգացուցել և զարգացնում է մեր մէջ ազգային կրօնական գիտակցութիւն, Այդ անունը միացուցիչ ազդեցութիւն է ունեցել միշտ Հայոց մէջ, Նոյն իսկ Հայոց եկեղեցուց բաժանուածներն էլ այդ անունով են ձգտում միշտ հոգեւոր կապ պահել իրենց համարին եղբայրների հետ, Ինչու որովհետև Ս. Գրիգոր իւր հոգեւոր ազդեցութեամբ իշխում է բրիստոնեայ Հայոց պատմութեան բոլոր դարերի վերայ՝ Գեո ԺԳ. դարում Յովհան Երզնկացին կենդանի ոգեւորութեամբ շեշտում է շարունակ Ս. Լուսաւորչի այդ միացուցիչ նշանակութեան մասին, Մի էլ, ասում է նա, Հայրն մեր, մի և միակրօն ազգն Հայոց, Հայաստանեայց եկեղեցուն ուղղելով իւր խօսքը, «ի հատէ հասկ վերաբուսար, ի հասկէ շեղջ յօրինեցար, ասում է, և ի միոյ շառաիղէ տնկեալ որթ թրմատացար, յօգնակի ուռովք աճեցեալ և տարածեալ լցեր զտեղիս ի ծովէ մինչև ի ծով, ի միոյ հոգեւէ մեծ հօտ եղեր հոգեւապետ ին մեծ իւ» Այս միութեան գիտակցութիւնն այնքան որոշ է, որ Երզնկացուն շատ զորմանալի է երևում, որ և է բաժանումն Հայոց մէջ, Նա իրաւացի կերպով որդոււմ է այն առիթների վերայ, որոնք խանգարում են այդ միապաղաղ սերտ հաղորդակցութեանը մինեւոյն հոգեւոր ծնողի զաւակների մէջ. «Ի միոյ ծնողէ բազմութիւն անթիւ զաւակաց ծնան, ասում է, և այժմ ի բազմութեանց

* Առ. Դաւ. Ին:

** Եւսեւ. Ա. 68:

Հարանց ոչ զոր ծնանեն և ծնելոցն ոչ որ դաստիարակէ զննունդ օրինացն։ Բաժանման և վարատման նպատակներին աչքի առաջ ունենալով՝ ընդունում հովուաց ցրուեալ ճապաղեցարս ասում է՝ մոլորականք և թափառեալք ի լերինս պաշտարեկք և վիրաւորք ի գայլոց։ Երբ ասումս վնասակարս և մահաբերս ճարակեալ պակասեալք և անբնակ ի գայար վայրէ ի սուրբ գրոց վարդապետութենէ՝ ի հանգրստարար ջրոյ աննունդ, ի փարախոյ ժողովարանէ արտաբոյ՝ և ոչ գոյ թեղ հովիւ որ իրկին գործեօք հովուէ։ Ունելով ի ձեռին ցուպ և գաւազան, ցպով ընդ գաղանթն մարտնչել և գաւազանաւ զխաչինսն ուղղել։» Հայոց Եկեղեցու այն ժամանակուայ լծը՝ շուստութեան այս պատկերին աւելի ոյժ տալու համար՝ Երզնկացին յիշում է և այն ողբալի վիճակը որ Հայոց մարմնական ճոխութիւններն օտարները տարան և հայ ժողովրդին գերի վարեցին։ Բայց այս ամէնը մտաբերելով հանդերձ՝ Երզնկացին բազմաւոր է ճանաչում Հայոց Եկեղեցին։ «Ի մեծն և ի գլխաւորական բարինս երանելի ես և յոյժ խնդալի ասում է նա՝ վասն զի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ։ աղբիւր յստակ աւանդութեանց քոց աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց։ յոսկի անբիժ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին պղինձ ժանտահոտ և կապար սևաթոյր ոչ գտաւ։ Եւ այս բարեխառնութեան պատճառ և օժանդակ է հռչակում նա Ս. Գրիգոր Լուսաւորչին որ է «գլուխ ամենայն բարեաց և հիմն կենաց յաւիտեանականաց։» *

Եթէ մի անգամ ուշադրութիւն դարձնենք մեր ազգի ընդհանուր վիճակի վերայ դանազան կողմերում մենք կը տեսնենք, որ նիւթապէս այս կամ այն առաւելութիւնը կամ պակասութիւնը մէկի թողած՝ բարոյապէս կամ հոգեպէս ամէն տեղ Հայերը մի կապով են կապուած իրար հետ։ Մենք կասեմք՝ այդ կապը Ս. Լուսաւորչի անունն է։ Ս. Լուսաւորչի Աջն է որ միացնում կապում է բոլորին մի լծոտի հետ և մի և նոյն սրբութեան յօգով։ Հեռու արևմուտքում արդէն խորթացած լեհաստանցի Հայերի մէջ անգամ որոնք հայկական ամէն բանը մոռացած են, դեռ պահում են Ս. Լուսաւորչի պատկերը, դեռ տօնում են Լուսաւորչի տօնը, դեռ ամէն ինչ որ «Լատինաց մէջ չկայ և Հայոց յատուկ է» զայն Լուսաւորչի կը սեփականեն։ Դեռ պատահական հայ ուղեւոր տեսնելիս երբ իրենց բուն հայրենակիցներին բարեւ են ուղարկում՝ «Լուսաւորչի պատրիարքին ձեռքը կը պահեսմ» ասում են և իր օրհնութիւնը կը հայցեմ մանա-

ւանդ ուրիշ Լուսաւորչի մայրապետաց բարենք տարէք» կրկնում են։ Հայազգի օտարացած մայրապետի մէկը «վզէն կուրծքին վերայ կախուած» Գրիգոր Լուսաւորչի պատկերը պահելով, սկսաւ լայն գրում է մի ուղեւոր և սրտին խորէն հառաչանք մ'արձակելով, ըսաւ. Մենք Հայու երկրէն եկած ենք, հոս կը կորինք... Գրիգոր Լուսաւորչի շարականներն ամենուն պարտքն է որ սովորին ու կարգան և այլն։ Այն Հայերը, որոնք այսպէս օտարացած են համարուում արտաքուստ նորա դեռ պահում են իրենց մէջ Ս. Լուսաւորչի անունը նուիրուած մատուռներ, խորաններ, եկեղեցիք, նորատօն կատարելիս նախատօնակին բոլոր ժողովրդով երգում են նորան նուիրուած հայերէն շարականները։ *

Այսպիսի անհուն ազդեցութեան շնորհիւ անշուշտ կը յարատեւ միշտ Ս. Լուսաւորչի զօրաւոր Աջը որ դարեր շարունակ այդպէս կապած պահել է Հայոց սրտերն իրար հետ, ամէն ժամանակ, նոյն զօրութիւնը ցոյց տալով, կը ժողովէ իւր հոգեւոր զաւակներին «մի և միակրօն» հօտ կազմելու և բաժանման ու վարատման վտանգներից զերծ պահելու մի բազմաշարքար նահատակ ժողովուրդ։

Կ. Կ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ՝

ԵԱԹՈՂՈՅ ՆԵՐՆԵՐՈՅ.

— Անգլիոյ մայրաքաղաքում շինուող մայր եկեղեցու համար Ֆէնտոն եպիսկոպոսն ժողովարարութեան ելնելով շրջում է Եւրոպայում Լեոն ԺԳ. պապը 25,000 ֆրանկ է նուիրել իւր կողմից։ Այս հանգանակութեան դրամներից տղամարդկանց նուէրները պիտի յատկացունին ս. սեղանը զարդարելու իսկ կանանց նուէրները ս. Աստուածածնի մատուռը կառուցանելու համար։

— Հռովմում վախճանուեց նշանաւոր ծիրանաւորներից Լուդովիկոս Գալիմբերտին, որ շատերի կարծիքով պապութեան թեկնածուներից մէկն էր։ Գալիմբերտին ծնուել է Հռովմում 1826-ին, ապրիլի 26-ին, կրթուել է Հռովմի Վոլլէջում, ապա մտել է նոյն քաղաքի հոգեւոր դպրոցն, իսկ 1858-ին ստացել է գիտնական աստուածաբանի աստիճան, այնուհետեւ հասնելով պատմութեան և աստ-

* Յով. Երզնկացի, Ներքող. Սոփ. Հայկ. Ծ.:

* Ալեքանդր Սր. Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-վալաքիա, Հունգարիա եւ Լեհաստան։ 1877 Փոքշան։